

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՆՇՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

12.07.2018 09:12



2018 թվականի հուլիսի 11-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում նշվել է 1999-2004թթ. ՀՀ փաստաբանների միության նախագահ Միշա Փիլիպոսյանի 80 ամյա հոբելյանը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, շնորհավորելով հոբելյարին, նշել է, որ փաստաբանական համայնքում կարևորում են սերունդների համերաշխությունը, ավագ գործընկերների փորձի փոխանցումը:

Ծննդյան 80 ամյակի և փաստաբանական ինստիտուտի կայացման գործում ունեցած ավանդի համար Միշա Փիլիպոսյանը պարգևատրվել է պատվոգրով և ոսկեպատ կրծքանշանով:

Փաստաբանների միության նախկին նախագահը շնորհակալություն է հայտնել միջոցառման համար՝ նշելով, որ նման ուշադրությունը կարևոր է տարիքով ավագ փաստաբանների համար: Հիշելով փաստաբանությանը վերաբերող առաջին օրենքի ստեղծմանը իր մասնակցությունը՝ նա ներկաներին ասել է, որ այդ օրենքի հիմքում փաստաբանական համայնքի միախմբվածությունն էր և մեկ ընդհանուր պալատ ունենալու գաղափարը, ինչը տարիների ընթացքում ապացուցել է իր գործունակությունը: Նա հորդորել է գործընկերներին ետ չնայել և իրականացնել համայնքին վերաբերող բոլոր բարի նպատակները:

Փաստաբանների պալատի նիստերի դահլիճի նախագահների համար առանձնացված անկյունում փակցվել է նաև Միշա Փիլիպոսյանի նկարը և փաստաբանական ուղու վերաբերյալ տեղեկատվություն:

Միշա Փիլիպոսյանի հակիրճ աշխատանքային կենսագրությունը:

Միշա Հայկազի Փիլիպոսյանը ծնվել է 1938 թվականին Թալինի շրջանի Մաստարա գյուղում (Արագածոտնի մարզ):

Փաստաբանությամբ սկսել է զբաղվել եղբորավարական ֆակուլտետում ավարտելուց հետո՝ 1968 թվականից:

1972 թվականին նշանակվել է Շահումյանի շրջանի իրավաբանական կոնսուլտացիայի վարիչ:

Պարբերաբար ընտրվել է ՀՀ փաստաբանների կոլեգիայի նախագահության անդամ:

1992-1996 թվականներին ընտրվել է Կոլեգիայի նախագահության նախագահի առաջին տեղակալ:

1996 թվականին ընտրվել է Կոլեգիայի նախագահության նախագահ: Համահեղինակ է «ՀՀ փաստաբանական գործունեության մասին» ՀՀ առաջին օրենքին, որով էլ հետագայում ձևավորվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների միությունը:

1999 թվականի մարտի 7-ին ՀՀ փաստաբանների միության հիմնադիր ժողովում ընտրվել է ՀՀՓՄ առաջին նախագահ:

1992-2012 թվականներին ընտրվել է փաստաբանների համագործակցության միջազգային միության փոխնախագահ՝ Հայաստանի Հանրապետությունից (Մոսկվա):

2003 թվականի մարտի 1-ին վերընտրվել է ՀՀՓՄ նախագահ՝ ծայրերի գերակշիռ մեծամասնությամբ:

2004 թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվեց «Փաստաբանության մասին» ՀՀ նոր օրենքը, որի հիմքով պետք է ձևավորվեր փաստաբանների պալատը:

2005-2009 թվականներին ղեկավարել է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակը:

2009-2011 թվականներին աշխատել է ՀԴԳ-ում որպես փաստաբան:





ՀՀ ՓԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՍՈՒՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```